տպելը, որոնք հրվաների կեանքից վերառած, պատահում են մայրաքաղաքների լրագրերում, թերահաւատութեամբ վերարերվելով գեղի լրագրական տեղեկութիւններից շատերը։ Սուտեան և բամբասանքի կայսերի մէջ թէ և շատ անգամ պատահում է ճշմարտութեան մի կորիզ,—բայց ինչպես իմանա՞ր է այդ կորիզը։

«Մենք հաւատացած ենք, որ եթէ ռուս լրագրիներից շատերը ձեռնարկվին այն սիրբունքներով, որոնցով ձեռնարկվում է «Մշակ» լրագիրը, ռուսաց հասարակութիւնը, որի թեում, ինչպես ամէն տեղ, կան շատ դիւրահաւատ մարդիկ, վաղուց է արդէն կը փոխեր իր հայեացքները հրվաների վրա։

«Նոյն անկողմնապահութեամբ գեղի հրվաները յայտնվում են և Կովկասի վարչութեան մէջ գիրք ունեցող հայերը, ինչ պաշտան և վարեին նրանք։ Համարելով իրանց հաւատարիմ զաւակներ Ռուսաստանի, թէև նրանք ծագումով ռուս չեն, հայերը համարում են հրվաներին էլ Ռուսաստանի հաւատարիմ զաւակներ, նայում են նրանց վրա որպէս ռուս քաղաքացիների վրա, և այլապէս նայել չեն կարող։»

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Մարտի 13-ին

Վանի և շրջակայքի մեր սովատանջ հայ եղբայրների և քոյրերի սոսկալի նեղութիւնքը, արձագանք է տալիս դեպի հայկական սերունդները և չարժում է ամէն մի ազնիւ զգացմունք և հոգի ունեցող հայի սիրտ՝ պարենի օգնութիւն հասուցանելու նրանց թալկացած սրտին։ Ով չէ լսում, նա խուլ է և խարամանդ խարված, ով չէ չարժվում օգնել մի փոքրիկ լումայով, նա հայ չէ և օտար արիւն ունի։ Ճշմարիտ հայն՝ հայկական սիրով ոգեորված կը կարեկցէ իր համարիւն եղբարներին։

Մեր սովալուկ հարազատների հառաչանքը, լսուց և Նորգ Երևան քաղաքի փոքրիկ մասը։ Նորգի ժողովուրդներից շատերը՝ կարծես կը բերված են նուիրաբերութեան մէջ։ Զը գլացան իրանց ազգատիպ քանը բացանել, քանի մի լումայ դցել մեր հացանդեր եղբայրների գանձանակը։ Բարեկենդան էր, մի խումբ կռվվելով բարեկենդան կանէր, երբ մի հայ սիրտդից առաջարկեցաւ մի բաժակ վանի սովլոց ազատութեան, մի սիրուր պատկեր ներկայացաւ ամէնքի առաջ, խսկոյն հանդանակութիւն բացվեցաւ յօգնութիւն սովատանջներին։ Ոչ ոք չը խնայեց։ Հեռեալ օրը, նուիրաբերվեցաւ մի քանիներից ևս։ Այս ազգասէրել կեանք տուող գործին մասնակցեցին Նորգի զարդացաց ուսուցիչները, վարժուհին և իրանց սակաւամասնեայ տուքով աչակիրներից և աչակիրուհիներից մի քանիները։ Գոյացած գումարն է 87 ռուբլի, որը ցուցակագրով ուղարկելով ձեզ, խնդրեմ հասուցանել վանի սովատանջներին։ Եւ բարեհաճեցէք տպագրել նուիրատուների անունները «Մշակ» լրագրի մէջ ի խրախուսութիւն նուիրողների։

Ա. Մատթէոս Տէր-Պողոսեանց 3 ռ., Գրիգոր Ամիրեանց 3 ռ., Բաղրեղ Եղիազարեանց 3 ռ., Մկրտիչ Ա. քահանայ Տէր-Պողոսեանց 2 ռ., Խաչատուր Նիկողոսեանց 1 ռ., Գեղամ Մարկոսեան 1 ռ., Զաքարիա Մկրտչեան 1 ռ., Յովսէփ Հայրապետեան 1 ռ., Ռուստամ Յակոբեանց 1 ռ., Յովհաննէս Ներսէսեան 2 ռ., Գէորգ Գեորգեանց 1 ռ., Սարգիս Յարութիւնեան 1 ռ., Սերոբէ Ստեփանեան 1 ռ., Թամրազ Սարգսեան 1 ռ., Աստուածատուր Խանդուռեանց 1 ռ., Գալուստ Մ. Մկրտչեան 1 ռ., Նազարաթ Ազարեան 1 ռ., Աւետիս Եղեանց 1 ռ., Աւետիս Սարգսեան 1 ռ., Խաչատուր Տէր-Աւետիսեանց 1 ռ., Գէորգ Դերձեան 1 ռ., Ստեփան Սիմէոնեան 1 ռ., Փիլիպպոս Վարդանեան 1 ռ. 25 կ., Գրիգոր Խաչատրեան 1 ռ., Պապի Յարութիւնեան 1 ռ., Սարգիս կարապետեան 1 ռ., Ոսկան Յարութիւնեան 1 ռ., Գալուստ Յովհաննէսեան 1 ռ., Յովհաննէս Գալստեան 1 ռ., Եղբայր Եղեանց 1 ռ., Յովհաննէս Խաչատրեան 1 ռ., Վասիլ Խէչանեանց 2 ռ., Աղարիա Ազարեանց 2 ռ., Աբրէն Գարրիէլեանց 1 ռ., Գրիգոր Թադէոսեան 1 ռ., Գրիգոր Մովսէսեան 1 ռ., Պետրոս Կարապետեան 1 ռ., Պարսեղ Թորոսեանց 1 ռ., Յակոբ Մկրտչեան 1 ռ., Յարութիւն Աւետիսեան 1 ռ., Խաչատուր Յովսէփեան 1 ռ., Հայրապետ Մկրտչեան 1 ռ., Նազարաթ Եղանեան 1 ռ., Յովհաննէս Մկրտչեան 1 ռ., Գէորգ Տէր-Պողոսեան 1 ռ., Վասիլ Աղաջանեան 1 ռ., Մնացական Տէր-Մատթէոսեան 1 ռ., Յարութիւն Բատալեան 1 ռ., Մարկոս Կարապետեան 1 ռ., Մակար Բաբուեան 1 ռ., Ոսկան Թորոսեանց 1 ռ., Ա. Դաւթ Տէր-Աւետիսեան 1 ռ., Յովհաննէս Յարութիւնեանց 2 ռ., Բ. Գալստեան 60 կ., Ա. Դաւթեանց 30 կ., Պ. Յովհաննէսեան 50 կ., Ց. Մնացականեան 50 կ., Մկրտիչ Աւետիսեան 1 ռ.

Նորգի կանանց դասից. Սապի Ամիրեանց 3 ռ., Սուսամբար Տէր-Յովհաննէսեանց 1 ռ., Զաւաշիր Եղիազարեանց 1 ռ., Անուշ Եղեանց 1 ռ., Շողակաթ Տէր-Պողոսեանց 2 ռ., Եղիսաբէթ Մուրտչեանց 80 կ., Եղիսաբէթ Մուրատեանց 40 կ., Նորգի զարդացաց ուսուցիչները, Վանան քահանայ Տէր-Յովհաննէսեանց 2 ռ., Մկրտիչ Զաքարեանց 2 ռ., Յովհաննէս Մելքոնեան 1 ռ., Վարժուհի Թանուհի Մանուչարեանց 1 ռ., աղաչկերտուհիներից Անուշ Յովհաննէսեան 20 կ., Հեղինէ Յարութիւնեան 10 կ., Մանիկ Եղիեանց 20 կ., Նոյեմբար Պետրոսեան 10 կ., Փանանտիտ Տէր-Աւետիսեանց 15 կ., Սոֆիէ Տէր-Յովհաննէսեանց 10 կ., Տրդատ Մելքի Զաքարեան 20 կ., Դանիէլ Ազարեանց 20 կ., Մկրտչէ Տէր-Պետրոսեանց 10 կ., Շմաւոն Տէր-Պետրոսեանց 10 կ., Արմենակ Խանդուռեանց 20 կ., Սիմէոն Գեորգեանց 20 կ., Մատթէոս Գէորգեան 20 կ., Աէլքսան Յարութիւնեան 10 կ., Լեան Մկրտչեան 15 կ., Կարապետ Տէր-Պողոսեանց 20 կ., Վարդան Զաքարեանց 15 կ., Արաէլ Պողոսեանց 15 կ., Վանան Դաւթեանց 15 կ., Արտաչէս Տէր-Յովհաննէսեանց 15 կ., Ստեփան Ենոքեան 20 կ., Գէորգ Տէր-Աւետիսեանց 10 կ., Թադէոս Աւագեան 10 կ., Մատթէոս Խաչատրեան 10 կ., Թադէոս Նուսեանց 10 կ., Սերոբէ Խաչանեանց 15 կ., Յովհաննէս Պողոսեանց 10 կ., Դերենիկ Տէր-Աւետիսեանց 15 կ., օր. Եղիսաբէթ Պողոսեան 1 ռ. Ընդամենը 87 ռ.

Մի Նորգեցի

ՆԱՄԱԿ ԳՕՐԻՑ

—

Մարտի 19-ին

Հայոց ազգի ընդհանուր չարժողութեանը յօգուտ վանի սովալոց ձայնակից եղաւ և Գորիս փոքրիկ հասարակութիւնը, առաջնորդութեամբ իր սիրելի համազգայնի Տէր-Ստեփանեանց աւագ քահանայի։ Անցեալ կիրակի, ամսոյ 9-ին, չը նայելով եղանակի անտանելի վատութեան, Սուրբ Աստեփանոս քարաչէն եկեղեցին լի էր թէ հայ և թէ օտարազգի ունկնդիրներով։ Տէր-Հօր տխուր կերպարանքը, արտասուալից աչքերը, արդէն զբաւած էին ներկայ եղողների խորին ուշադրութիւնը։ Քարոզիչը ազգու և գրաւիչ խօսքերով ներկայացնելով ունկնդիրների առաջ սովալոց անտանելի դրութեան տխուր պատկերը, յիշեցնց թէ Հայաստանի զաւակաց մեծամասնութեան ներկայ վիճակը նմանում է Երուսաղէմից Երիքով փոսացող աւետարանական վիրաւորեալին. ջանկենքանք նոցա մեռոյ անգութ քահանայի և սառնասիրտ դեստացու պէս, ասում էր տէր Տէրը, այլ զթառատ սամարացու նման մեռենանք կարեկցութեամբ, լուանանք սովից առաջացած վէրքերը, չը խնայելով մեր օժանդակութիւնը անվատահ հասուցանենք նրանց ապահովութեան պանդոկը։ Գրիչս անզօր է նկարագրելու այն տարաբութիւնը, որ ունեցան այս տաք խօսքերը ունկնդիրների վրա։ Աստուծոյ տաճարը կարծես ողբոց և սուգի հանդիսարան էր դարձել։ Վերջապէս տէր-Հայրը յայտնեց, թէ սա ազգային կեանքի և մահու հարց լինելով, քաղաքիս ոչ մի հայ ընտանեաց և ոչ մէկը նորա անդամներից յետ չը պիտի մնայ մասնակցութիւնից։ Մինչև անգամ յետին աղքատը իր լուման թող դէպ այս ազգային գանձանակի մէջ։ «Հաւատացնում եմ ձեզ, չարունկեց տէր-Հայրը, թէ ով որ ամէն օր դէմ առ դէմ կանգնած է նեղութեան և կարօտութեան առաջ, նա ասելի լաւ գիտէ գնահատել և կարեկցել իր նեմանների դրութեանը։» Որովհետև տէր հօր պաշտօնական զրաւմունքը չը ներեցին իսկոյն չարունակել նուիրատուութիւնը և այդ մէջ ցոյն ևս վա հասաւ նաև հոգևոր իշխանութեան կարգադրութիւնը, որով քաղաքիս երեք եկեղեցիների ազգ քահանաները, այն է՝ Տէր Գրիգոր փանեանց, Տէր Յովհաննէս Տէր-Մինասեանց և Տէր Ստեփան Տէր-Ստեփանեանցը պարտաւորվում էին գործին մասնակցելու, ուստի ամսոյս 18 քաղաքական վարչութեան դահլիճում կայացաւ ժողով՝ ի ներկայութեան 40 անձանց։ Ժողովականք Տէր-Ստեփան հօր ճառը լսելուց յետոյ, խսկոյն կազմեցին յանձնաժողով հետեւեալ 8 մարդուց, որոնք են՝ Ստեփանոս Հայրապետեան, Գրիգոր Գրիգորեան, Գրիգոր Գրիգորեան, Գրիգոր Գրիգորեան, Գրիգոր Գրիգորեան, Գրիգոր Գրիգորեան, Գրիգոր Գրիգորեան, Գրիգոր Գրիգորեան։ Ինչպես ասացինք, ամսոյս 9-ին, չը նայելով եղանակի անտանելի վատութեան, Սուրբ Աստեփանոս քարաչէն եկեղեցին լի էր թէ հայ և թէ օտարազգի ունկնդիրներով։ Տէր-Հօր տխուր կերպարանքը, արտասուալից աչքերը, արդէն զբաւած էին ներկայ եղողների խորին ուշադրութիւնը։ Քարոզիչը ազգու և գրաւիչ խօսքերով ներկայացնելով ունկնդիրների առաջ սովալոց անտանելի դրութեան տխուր պատկերը, յիշեցնց թէ Հայաստանի զաւակաց մեծամասնութեան ներկայ վիճակը նմանում է Երուսաղէմից Երիքով փոսացող աւետարանական վիրաւորեալին. ջանկենքանք նոցա մեռոյ անգութ քահանայի և սառնասիրտ դեստացու պէս, ասում էր տէր Տէրը, այլ զթառատ սամարացու նման մեռենանք կարեկցութեամբ, լուանանք սովից առաջացած վէրքերը, չը խնայելով մեր օժանդակութիւնը անվատահ հասուցանենք նրանց ապահովութեան պանդոկը։ Գրիչս անզօր է նկարագրելու այն տարաբութիւնը, որ ունեցան այս տաք խօսքերը ունկնդիրների վրա։ Աստուծոյ տաճարը կարծես ողբոց և սուգի հանդիսարան էր դարձել։ Վերջապէս տէր-Հայրը յայտնեց, թէ սա ազգային կեանքի և մահու հարց լինելով, քաղաքիս ոչ մի հայ ընտանեաց և ոչ մէկը նորա անդամներից յետ չը պիտի մնայ մասնակցութիւնից։ Մինչև անգամ յետին աղքատը իր լուման թող դէպ այս ազգային գանձանակի մէջ։ «Հաւատացնում եմ ձեզ, չարունկեց տէր-Հայրը, թէ ով որ ամէն օր դէմ առ դէմ կանգնած է նեղութեան և կարօտութեան առաջ, նա ասելի լաւ գիտէ գնահատել և կարեկցել իր նեմանների դրութեանը։» Որովհետև տէր հօր պաշտօնական զրաւմունքը չը ներեցին իսկոյն չարունկեցնել նուիրատուութիւնը և այդ մէջ ցոյն ևս վա հասաւ նաև հոգևոր իշխանութեան կարգադրութիւնը, որով քաղաքիս երեք եկեղեցիների ազգ քահանաները, այն է՝ Տէր Գրիգոր փանեանց, Տէր Յովհաննէս Տէր-Մինասեանց և Տէր Ստեփան Տէր-Ստեփանեանցը պարտաւորվում էին գործին մասնակցելու, ուստի ամսոյս 18 քաղաքական վարչութեան դահլիճում կայացաւ ժողով՝ ի ներկայութեան 40 անձանց։ Ժողովականք Տէր-Ստեփան հօր ճառը լսելուց յետոյ, խսկոյն կազմեցին յանձնաժողով հետեւեալ 8 մարդուց, որոնք են՝ Ստե-

---

քրքրվում, թէ ինչպես են ապրում, ինչ եղանակով են գործում օտար ազգերը օտար երկիրներում։ Ուզում եմ ասել, որ հայը օտարներից օրինակ չէ վեր առնում, այլ սպասում է, որ օրինակը տար նրան իր նման մի հայ։—Ուրեմն, մենք առաջին օրինակը կը տանք, և ես հաւատացած եմ, որ մեզ կը հետեւեն շատերը։ Ես լաւ եմ ճանաչում մեր ժողովուրդը. նա այնքան շատ տանջվել է, որ չէնց այս բոպէիս պատրաստ է Թուրքի, քրդի մրոը ուտել և արիւնը խմել, եթէ մի հնար կը գտնէ։ Նա սրտումը սառիկ ատելութիւն ունի, միայն այդ ատելութիւնը թաքնված է։

Վարդանը և պ. Դաւդուկեանը ուրախութեամբ լսում էին Հայրապետի ասածները։ Նրա մէջ խօսում էր ժողովրդի ձայնը։

—Երջանիկ է այն ժողովուրդը, որ ատել գիտէ, բացականչեց պրոֆեսի երիտասարդը մի առանձին ոգեորութեամբ։—Նա, որ ատել չը գիտէ, զուրկ է մնում և սիրոյ զգացմունքից...։

—Իմ հայրը ասում էր, թէ հողը պատրաստ չէ՝ խօսեց Հայրապետը։—Նա խելացիս խելացի մարդ է, նրա սրտում կան շատ ծածկված և բարի խորհուրդներ։ Բայց նրա խելացի խրատները, նրա զգուշաւորութիւնը հանում է մինչև յանցաւորութեան։ Նա իր համբերութեամբ թմրեցրել է մեզ և պահել է քարացած անշարժութեան մէջ։ Մեր գրութեան մէջ, իմ կարծիքով, համարձակութիւնը անհնազանդութիւնը և մինչև խենթութեան հասած յանդգնութիւնը աւելի գործ է կատարում, քան թէ իմաստունների լուրջ և խոհեմ մտածութիւնները։

—Այո, ամէնն խելացին կը մտածէ, խենթը գեսից անց կը կենայ... պատասխանեց Վարդանը ծիծաղելով։

—Այդ շատ ճիշտ է, նկատեց պ. Դաւդուկեանը։—Խելացիների խելքը շատ անգամ խաթում է իրանց, և խարխմները այն ժամանակ միայն հասկանում են թէ յիմարվել են, երբ զբաղերը իրանց գործը արդէն ուշացած են լինում...։ Մի ժամանակ կ. Գոլսի մեր խելացիները մտածում էին, թէ հայերի համար աւելի նպաստաւոր է Թուրքաց անկերի և անկարգ կառավարութիւնը, քան թէ մի բարկարգ և քաղաքակիրթված կառավարութիւն։ Մտածում էին, թէ մի քաղաքակիրթված կառավարութիւն իր կուլտուրական բարձր զարգացումով կարող էր կլանել և ոչնչացնել հայերին,—մինչդեռ խելացի հայերը, օգուտ քաղելով Թուրքի յիմարութիւններից, զոյութեան կռիւի մէջ կարող էին մրցել նրա հետ, կարող էին յաղթող հանդիսանալ։ Այդ ենթադրութիւնը թէորիայի կէսից ուռնչ է։ Բայց ամենահիշտ փիլիսոփայական թէորիան երբեմն կեանքի փորձի մէջ յայտնվում է սխալ։ Պատմութիւնը իր առանձին զարաւորութիւններն ունի։ Եթէ մի քաղաքակրթված մեծ ազգութիւն կարող է կլանել փոքր ազգութիւններ, նոյնը կարող է կատարել և մի անքաղաքակիրթ մեծ ազգութիւն իր մանր հարատակ ազգութիւնների վերաբերութեամբ։ Ցարերութիւնը միայն գործ դրած միջոցների և հնարների մէջն է.—մեր սպանում է բարբարոսական միջոցներով, միւսը՝—կուլտուրայի միջոցներով։

—Ես աւելի պարզ կը խօսեմ, չարունակից պ. Դաւդուկեանը։—Մեզանից ոչ ոք մինչև այսօր չէր հասկացել Թուրք կառավարութեան զգալի քաղաքագիտութիւնը հայերի վերաբերութեամբ։ Մեզանից ամէն մէկը երեխայական կարճատեսութեամբ կրկնում էր, թէ «մեր ազգան թիւրքայումն էր։ Մենք նայում էինք կատաղող զեղծումների, անկարգութիւնների և բարբարոսութիւնների արտաքին մակերեսի վրա, բայց թէ որպիսի գժոխային մութենայութիւն էր թաքնված նրանց տակին,—այդ մենք չէինք տեսնում։ Մենք միայն տեսնում էինք հարատաւորութիւններ, սպանութիւններ, բռնի կրօնափոխութիւններ և զանազան տեսակ չարագործութիւններ, որ կատարում էին մեր հարևան բարբարոս ցեղերը։—Այդ բոլորը մենք տասրնայ և պատահական էինք համարում, և չը գիտէինք, որ յիշեալ անկարգութիւններին մի գաղտնի քաղաքերով կայ, չը գիտէինք, որ այդ բոլորը կատարվում է բարձր ատիճանաւորների թելադրութեամբ։ Մենք մեղադրում էինք կառավարութիւնը այն մտքով միայն, որ նա թոյլ է, որ նա անոնգ է, որ նա իր անգղած հպատակները զսպել չը գիտէ։ Բայց չէինք հասկանում, որ կառավարութեան պաշտօնեաները իրանք այդ բարբարոսներին զրգռում էին հայերի դէմ, քրիստոնեայ ազգերը ոչնչացնելու համար։ Ինչու, կը հարցնէք ինձ։

—Թուրքիան շատ լաւ է հասկացել, եթէ նա մի օր կը զրկվի իր Եւրոպական և ասիական նահանգներից,—այդ կորստի պատճառը լինելու են տեղային քրիստոնեայ ազգերը։ Նակահիները։ Նա հասկացել է, որ քրիստոնեայ հպատակների զոյութիւնը իր պետութեան մէջ ամէն անգամ պէտք է ստիպ տայ քրիստոնեայ թագաւորներին միջամտել թիւրքիայի գործերի մէջ և բարձրացնել մի նոր արևելեան հարց։ Իր նահանգները չը կորցնելու համար, քրիստոնեայ թագաւորների միջամտութիւնից ազատվելու համար, Թուրքը ստիպված է ոչնչացնել քրիստոնեաներին։—Քրիստոնեաների պատճառով նա իր եւրոպական նահանգներից չատերը կորցրեց և մնացածը կորցնելու վրա է, իսկ ասիական երկրներից իր ամրոցները պահպանել է միայն փոքր Ասիան։ Այստեղ գլխաւոր քրիստոնեայ ազգութիւնը, որ սպառնում է պետութեան այդ մասի անջատմանը—են հայերը։ Ուրեմն եւրոպական տէրութիւնների ձայնը կասելու համար, պէտք է ցոյց տալ նրանց, որ Հայաստանում հայ չը կայ։ Այդ սպանութեան գործի մէջ Թիւրքիան ընտրել է ամենասարսափ դահիճներ՝—քրդերին և չէրքեզներին։

—Եթէ հաւաքելու լինենք վերջին 20—30—50 տարիների ընթացքում կատարված փաստերը, կը համոզվենք, որ այդ բոլորը ճշմարիտ է։ Կը համոզվենք, որ հայերի վերաբերութեամբ գործված հարատաւորութիւնները, ճնշումները, հարձակումները, յափշտակութիւնները, մի խօսքով բոլոր բարբարոսութիւնները պատահական երևոյթներ չեն։—Կը համոզվենք, որ այդ բոլորի մէջ թաքնված է մի նախապէս մտածված, կարգադրված հիմք և նպատակ, որ ծառայում են հայկական տարրը հետզհետէ տկարացնելու, բարոյազրկելու և վերջապէս ոչնչացնելու համար։ Ես կը յիշեմ մի քանի փաստեր միայն։ Հայերին անձնապաշտպանութեան բոլոր հնարներից զրկելու համար, խլեցին նրանց ձեռքից դէնքը, կապեցին, կաչկանդեցին նրանց ձեռքերը, իսկ հայերի թշնամիների ձեռքում դէնք տուին։ Ցեղաց տեսան, որ այդ բաւական չէ հայերին տկարացնելու համար, տեսան, որ այդ տարրը, որպէս մի ամրատաւեր և անտեսանելի ժողովուրդ, կարողանում է մրցել իր հակառակորդների հետ, կարողանում է իր զոյութիւնը պահպանել իր նիւթական զօրութիւնով—իր հարստութիւնով։ Ուրեմն պէտք է ամէն հնարներ գործադրել, որ նա աղքատանայ, ուրեմն պէտք է անտեսանելի մատնվել նրան։ Հարկը ծանրացրին, շրջարերութեան մէջ եղած արժէքները ոչնչացրին (առանց նախապէս յայտարարելու ժողովրդին) մի խօսքով զանազան տեսակ ֆինանսական խարդախութիւններ գործ դրեցին, որպէս զի ժողովրդի ձեռքում գտնված դրամը իր արժէքը կորցնի և հարկերը վճարելու անկարող լինի,—որպէս զի սաթի ունենան նրա տնտեսութեան ամենաանհրաժեշտ պարագաները հարկերի փոխարէն վաճառել տալու, նրան երկրագործութեան ապահովութիւններից զրկելու համար։ Այդ մէջ նրանց դարձեալ չը կարողացան լրացնել թիւրքայի նպատակը։ Ժողովուրդը տակաւն էր, եթէ ի հարկերի երկրում վատակ չէր գտնում, պանդխտանում էր դէպի օտար ասիաստ, ասիաեղ փող էր վաստակում, և բերում, լցնում էր գանձարանը։ Ուրեմն ինչ պէտք էր անել։—Թիւրքիան մտածեց միանգամից ցամաքացնել հայ ժողովրդի ապրուստի աղբիւրները։ Նա հնարեց իր կայուսական ամենախարամանկ օրէնքները, և հայերը զրկվեցան կայուսատուրութեան իրաւունքից։ Հայերի ձեռքում գտնված հողերը անցան քուրդ դերբէկների, չէրքէզների, մուֆթիների, դաղիների և զանազան վարձների էֆրանտների ձեռքը։—Դրանք տէր դարձան, իսկ հայը, ագխատասէր և արդիւնաբերող հայը, դարձաւ այդ բարբարոսների հողերը մշակող սարկը և հորոյ։ Հայաստանում հայերի ի մասնաւորապէս մեծամասնութեան մէջ եղած այժմեան անթիւ և անհամար կալուսական վէճերը ու գաղերը, կամ լինում են կառավարութեան կողմից առանց ուշադրութեան, կամ եթէ վճռվում են, վճիռը կայանում է անպատճառ յօգուտ մահմեդականների։ Հազարաւոր օրինակներ կան այդ մասին։ Եւ այդ վճիռների մէջ քննութիւնը բաւական է ասաց ցուցանելու համար, թէ կառավարութիւնը չէ ցանկանում, որ հայի ձեռքում հող մնայ։ Այլ ցանկանում է, որ նա զրկվի իր պապերի ժառանգութիւնից, որպէս զի գրանով կարողանայ աւելի սասկացնել հայերի գաղթականութիւնը, և Հայաստանը դատարկելով հայերից, նրանց տեղը լցնել քրդերով և չէրքէզներով։

(Կը չարունակվի)

փանոս աւագ քահանայ Տէր-Սահակեանց, պաշտօնավարար քաղաքագլխի Գրիգոր Ամիրեանց, քաղաքական բժիշկ Զաքարիա Տէր-Մինասեանց, արհեստաւորաց ներկայացուցիչ Գրիգոր Թումանեանց, խիստ Նիկո Դէլամարէ, Գալուստ Սահակեանց, քաղաքական վարչութեան անդամ Աղալոյ Թումայեանց և Գէորգ Ռոմանեանց։ Ապա նոցն տեղում բացվեցաւ սոսրագրութիւն և նուիրատուութեան գումարը հասաւ 480 բուլու։ Հանգիստների հեռանալուց յետոյ յանձնաժողովը հենցաւ իր առաջին նիստը, յորում և կարգադրեց.ա) յորմեկ տոս առանձին գումար՝ մէկի մէջ քաղաքիս հայ հասարակութեան նուիրատուութիւնը մուտքանելու, միւսը կանանց դասի համար, որ ապի յանձնվի երեք անձանց, այն է Պալսի Տէր-Սահակեանի, Մարիամ Թիթարեան և իշխանուհի Նինոյ Երիսեանի, երրորդը քաղաքիս օտարազգի բնակիչների համար, որը յանձնվելու է պ. Նիկո Դէլամարէին, իսկ չորրորդը Գօրգ վիճակի բնակիչների համար, բ) հաւաքած փողերը յանձնել 'ի պանտոս Գալուստ Սահակեանին։ Յանձնաժողովս, որպէսզի ինձ յայտնի է, մտադիր է այս օրերումս հաւաքած փողերը խմբագրութեանդ հասուցանել, ասելով հետզհետէ տեղեկութիւն նաև իր գործունէութեան հետանքների մասին։

Դ. Պապսվանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պ. Վանան Մանիկոնեանցը խնդրում է մեզ յայտնել հետեւեալը. «Այս օրերս Թիֆլիսի մէջ զանազան լուրեր են տարածվել իմ մասին, որ իբր թէ ես խուզ եմ տուել կօմիտէտին մշտապէս մասնակցելու նրա ներկայացուցիչներին։ Պարտաւորութիւն եմ համարում յայտնել, որ ես ցանկանում եմ յայտնել խազալ կոմիտէտ խմբի հետ միայն մի անգամ, և ես երբէք դիտաւորութիւն և ժամանակ էլ չունեմ մշտապէս խազալ այդ խմբի հետ»։

—

Ստացանք պ. Ա. Ի. Խզրաչանից 5 բուլ յօգուտ Վանի սովատանչների։

—

Մի երիտասարդ խնդրում է մեզ յայտնել որ տալիս է հաչապահութեան դասերը։ Պայմանների համար դիմել պէտք է Կարգիոցյա Պալատա, կամ Սուրբ Նշանի փողոցը, հաչտարար դատարանի դիմաց, տուն № 17, պ. Տէր-Յակոբեանցին։

—

Պ. Գէորգի Ներսէսեանի կարդալու է չորեքշաբթի օր մարտի 29-ին, Թիֆլիսի ժողովարանում մի հրապարակային դասախոսութիւն վրայ լեզուով «Վրայ պատմութեան հին շրջանի մասին»։

—

Ցեղական լրագիրները լսել են որ պ. Ա Ներսէսեանի դիտաւորութիւն ունի հրատարակել մի նոր վրացերէն լրագիր «Գոլա» (Ուղի) վերնագրով։

—

Այսօր «Մշակն» ունի 920 բաժանորդ, իսկ Թիֆլիսում հատով ծախվող համարների հետ միասին մենք ունենք 970 բաժանորդ։

—

Պ. Խաչատուր Մելիք-Դաղայենց գրում է մեզ հետեւեալը. «Ձեր լրագրի № 38 մէջ տպված մեր նամակի նուիրատուների թւում Թուրչուս Մնացականեանցի մասին ասված է որ նա նուիրել է 10 բուլբ։ Այդ սխալ է. նա նուիրել է 5 բուլբ, որի հետ միւս նուէրների գումարը հասնում է ութսուն գումարի, որքան հաստատած է «Մշակի» խմբագրութիւնը»։

—

Մեր երկրամս համարում բանաստեղծական մէջ տպված Թիֆլիսի թատրոնական կոմիտէտի հայտի մասում մի սխալ։ Երրորդ երեսի, երկրորդ կոլոնի, տասներորդ տողի վրա նեղքեանց տպված է 8474 ր., բայց պէտք է լինէր՝ 14,474 ր.։ Ուրեմն Արծրունու թատրոնում ներկայացումներ տալով կոմիտէտը արդէնք կուտենար 16,500 ր., իսկ Պոլսի մեջ 14,474 ր.։ Զանազանութիւնը 2026 բուլբ է։ Ուրեմն կոմիտէտը դէֆիցիտ չէր ունենայ։

—

Պարտաւորութիւն ենք համարում յայտնել ախալցխացիներին, որ այն լուրը թէ ԱԽԱԼՑԽԱՅԻ հայ օրիորդական դպրոցներից մէնի մէջ մի քահանայ-ուսուցիչ մանուկներին անիծանց ենեցաւ է, հաղորդված է եղել մեզ նոյն իսկ այն դպրոցից, և ոչ թէ մեր մշտական աշխատակից, պ. Դրիգոր Նիկոլոզանցից, որ ինչպէս ասվեց մեզ գրում է, բոլորովին տեղեկութիւն էլ չունէր այդ անցքի մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՅԻ

—

Կ. Պոլիս, 15 մարտի

Բաւական ժամանակ է որ այլ ևս Թիֆլիս հրատարակուած հայ թերթերն չեմք ընդուներ։ Թիւրք կառավարութիւնը Ռուսերէ դեսպանատնէն խնդրեր է որ հրամայէ ռուս թղթատարութեան այդ թերթերն չը յանձնել բաժանորդաց, թղթատարութիւնը այդ հրամանը ի գործ դրած, հետեւաբար «Մշակի» 19 և «Մեղու» 11 թիւերէն յետոյ այլ ևս չեմք ընդունած, ուստի ասեն մը այլ ևս Նեղութիւն մ'առնուք և մի խրկէք. թիւրք կառավարութիւնը մեր մտաւոր չարժանց չատ ուշադիր է և եթէ ապիկար չը լիներ, չատ արգելքներ կընար յարուցանել։ Հիմա—գիմա ինչ որ կարող է այն կընէ։ Կ. Պոլսոյ թաղերէն մին Ենիգաբաւ, անհատական վարժարանի մը մէջ մեծախանութեան մը առթիւ ասեն նախասասութիւն պիտի լինիր, տեղական իշխանութիւնը արգելեց, առարկելով որ այդ չէնքը եկեղեցւոյ չը վերաբերեր, ուստի հոն հայերէն ասենախասուն կամ դասախասուն ներելի չէ, (չեմք գիտեր որ օրինաք) ուստի ասենախասը տեղադրեցաւ Թատրերէն խոսել և ոստիկանութեան պաշտօնեայ մ'ալ ներկայ գտնված է։ Կ. Պոլիս հրատարակեալ թերթերն Ասիա խրկուած ժամանակ թղթատարի մեծ ծախքեր պէտք է վճարուին, օրինակի համար փոխանակ կրամի վրա հաշուելով առնելու, թերթի վրա կառնուն, մէկ թերթին 10 փարայ (որ ըսկէ 2½ կոպէկ) արդ 20 փարա ծախսուած թերթ մը կը վճարէ Կ. Պոլսէն Վան խրկուելու համար իւր գնոյն կէսը. անդին 40 փարա ծախսուող թերթ մը նոյնպէս պիտի վճարէ 10 փարա. այս կարգադրութիւններն վերջին տարիներս եղան որպէս զի օրէսի հետ է Հայաստանի և Կ. Պոլսոյ մէջ յարաբերութիւնք քիչ բլան։ Վանայ մէջ օրաթերթի մը կամ չաբաթաթերթի մը հրատարակութեանը պիտի ձեռնարկուէր, և Կ. Պոլիս ալ բաւական աչխատողներ կային որպէս զի պէտք եղած գրամագլուխը հայթայթին, բայց կառավարութիւնը հրաման չը տուաւ առարկելով թէ ուր որ թուրքերէն թերթ չը հրատարակուիր, հոն ներելի չէ որ հայերէն թերթ մը հրատարակուի. թիւրքերուն անհանդուրժելի է որ մենք իրենցմէ առաջ անցնինք մտաւորական Անցեալները Բ. Դրան թիւրք երիտասարդ պաշտօնեայ մը հայ պաշտօնէի մը հետ միասին այցելութեան կերթայ Աշարատեանի դրատեղեանը, հոն եղած կարգադրութիւնը տեսնելով, չը կրնար դարմանք չը յայտնել թէ իրանց պաշտօնատուներէն չատ աւելի լաւ է, ցաւ կը յայտնէ, թէ մինչ հայք զանազան ընկերութիւններ կազմած սկսած են յառաջադիմել, թիւրքերն ամէն ինչ կառավարութիւնէն սպասելով ոչ մինչ կընեն. փափաք ցոյց կուտայ թէ իրենք ալ սկսեն ընկերութիւն կազմել, պէտք եղած գրանգիներն կը ստանայ. տեղեկագիրներ կառնու և թղթայ ու հայոց իրր եղբայր աչներ խատակից վիճելու կարեւորութեանը վրա խոսելով կը մէկնի. դեռ չը լսեցիք որ այդ ընկերութիւնը կազմած լինիր. ինչ որ ալ ըսեն, թերաց չատ դժուար է մտաւորական յառաջադիմութիւն, ուստի մեզ արգելք լինելն իրենց չանարը կը համարին։ Միւս կողմէ քիւրդերը կրթելու միջոցները կը խորհին. Թերսիսի գացող հրամանատարները կը տեղեկացնեն թէ գրամ խրկելու է որ քիւրդերու համար դպրոցներ չինուեն, հոսկէ կառավարութիւնը կը պատասխանէ թէ պէտք է քիւրդերէն սատակ առնուլ և այնպէս դպրոց չինել և մատակարարել զանոնք, պատասխան մը որոյ դարձադրութիւնը անհնար է. սակայն քիւրդերը տրամադիր են կրթուելու և մեր չաներն կը պահանջեն որ զիրենք մեր վարժարաններն ընդունենք, օգուտներն բացատրել ասելովդ է։ Երբ պ. Վասիլեան անցեալ ամառ «Աշարատանի» կողմէ Թէրսիսի գնաց քիւրդերու այդ բոյնը, որպէս զի երկիրը քննէ և հոն կրթութիւն տարածելու սկզբնաւորութիւն մը ընէ, կը պատմէ թէ երբ ժողովրդի գլուխը կեցած ժողովրդի ծախքը և աչխատութեամբ թուրքի վարժարանը կը կառուցաներ, քիւրդերը ապած էին, պահ մը կարծեր են որ հայերը հոն բերդեր կը կառուցանեն և սկսեր են վախենալ (տեղացի տանէրներն այս գաղափարը ունեցեր են և կըսեն հոգեր, թէ մինչ այս օրս ալ պիտի տեսնէինք որ հայերն բերդեր չինեն)։ Քիւրդերը յետոյ իրենք ալ սկսեր են ձրիաբար քար կրել և ուրիշ աչխատութիւններ յանձն առնուլ, աղաչելով մանգամայն որ իրենց գաւառներն հոն խրկեն. կարծեմք թէ «Աշարատանն» ընկերութիւնը այս փափաքն ի նկատի պիտի առնու և ներկայ չրջանիս մէջ զործադրութեան սկզբնաւորութիւնն մը պիտի փարէ։ Ցերսիսի այդ ամբոխ լեռներն հայոց համար ապագայ ունին, այս կէտը մեր ուշադրութիւնէն պէտք չէ վրիպի. կառավարութեան պաշտօնեայներն միշտ ջանացած են որ հայերն պակասն ասկէց և յաջողած է, մեք պարտիմք քիւրդերն մեզ բարեկամացնելով միասին գործել։ Թիւրքիայի մտատանջութիւն է որ Տէրսիմ Հայաստանի Զէյթունը չըլլայ. ինչ որ Զէյթունն հոգ կը պատճառէ թրքաց, այդ բաւական է. չեմք գիտեր թէ տեսաք նոր հրատարակուած Կապոյտ տետրը, որ խիստ կարեւոր տեղեկութիւններ կը պարունակէ Զէյթունի հարցի մասին. եթէ «Մասիս» թարգմանէ հետզհետէ կը խրկեմք, իսկ ինչ որ չէ հնար հոս հրատարակել, կը ջանամք թարգմանելով «Մշակի» խրկել։—Լաւագոյն կը լինի որ իրր թերթան ամբողջ Կապոյտ տետրը (Blue booch) որ 138 երեսներէ կը բաղկանայ և 129 կոպէկ կը պարունակէ Զէյթունի կարևոր հարցի վրա, ամբողջապէս «Մշակի» մէջ հրատարակուի։

Սոյն կապոյտ տետրէն կը տեսնուի թէ Անգղիոյ կառավարութիւնը աչխատած է Զէյթունի հարցը յոգուտ հայոց վերջացնելու. երկար բանակցութիւններ տեղի կունենան, Անգղիոյ դեսպանը և պ. Մալէթ, Անգղիոյ Հալէպի հիւպատոսը ամէնքն ալ խնդրոյն կարևորութիւնը ըմբռնած են, բայց թիւրք կառավարութիւնը միշտ կը դիմադրէ. Քեամիլ բաշայի վատ գործերն ամէնեն կը տեսնուին, Սալիզպրի և Լէյարդ կը պնդեն այդ ապաիրատին պաշտօնակցութիւնը, Դուար կը խոստանայ և կը խաղցնէ, Սալիզպրի կը պահանջէ և կը սպառնայ Հալէպի կառավարիչ Քեամիլ բաշային հարցը մինչև խորհրդարանին ներկայացնել, հապա չորս ծիգ տարիների մէջ կարող կը լինի բոլոր իւր զօրութեամբը Անգղիոյ կառավարութիւնը բաչա մը պաշտօնակ ընելու, և ինչ պաշտօնակցութիւն, Քեամիլ բաչա այսօր նեղքին գործոց նախարարին խորհրդարանի մեջ պաշտօնը ստանձնած է։—կը տեսնէք թէ թիւրքերն կը համարձակին մինչև իսկ Անգղիոյ հիւպատոսին խրկուած նամակներն առնուլ և վար դնել, որոյ համար Սալիզպրի կը բողոքէ։ Այս նամակներուն մէջ ամէնեն կը տեսնուին հայոց տառապանքները և ամէնեն կը տեսնուին հայոց տառապանքները և իրենց դատին արդարութիւնը. թերևս անգղիացիք համոզուին թէ Ցանկաստանի մէջ բարեկարգութիւններ ներմուծելն մի անհնարութիւն է, Զէյթունն իրենց օրինակ լինի։

Կապոյտ տետրակին մէջ տակաւին աչքիս չը զարկաւ, թերևս դեռ հանդիպում, պ. Զէյմասատի, որ մասնաւորապէս բարեկարգիչ յանձնաժողովոյ հետ միասին խրկուեցաւ Անգղիոյ կողմէ ի Զէյթունն, հաղորդած այն տեղեկութիւններն թէ «Զէյթունի հարցը, բարեկարգութեանց խնդիր մը չէ, այլ հայ ազգի զարթման առաջին նշանը և ցոյցը. երբ Զէյթունն էի յանկարծ պզտիկ երիտասարդ մը երեցաւ, քանի մը ժամ կեցաւ և անհետացաւ, ուսկից եկաւ, ուր գնաց, ինչ ըրաւ չը գիտցանք, միայն ապասով եմք որ կարեւոր գործ մը կարգադրեց։ Բ. Դրան համար ամենէն չանարը միջոցն այդ հարցը վերջացնելն է զոհացնելով Զէյթունցիները»։

Եթէ Կ. Պոլսոյ մէջ մատնութիւններն, և մերիններուն կողմէ մատնութիւններ, արգելք չը լինէին, թերևս «Մշակի» ընթերցողք չատ աւելի տեղեկութիւններ ստացած լինէին պ. Զէմասատի գիւտակաված երիտասարդին գործոց վրա։

Նոքա որք կը կարդէին թէ Զէյթունի խնդրոյն նկատմամբ «Մշակի» մէջ հրատարակուած Կ. Պոլսոյ թղթակցութիւններն ստոյգ մնալէ հետո են, կրնան կապոյտ տետրը և այդ թղթակցութիւններն միասին բաղդատել։ Երբ առաջին անգամ «Մշակի» մէջ տեսնուեցաւ Պապկիի անունը իւր գործերն և բանտերը կոխելն, մեքիչ չատերն չը խնդացին, սակայն «Temps», «Nouvelle Revue» այդ Պապկիի chevaleresque ածականը տուին և այսօր օտարամանք եթէ աւագագագաս կը կոչեն զինքն, զկնմանք քաջասիրտ հայ զօրական մը ընդունած ենք։

Ցնեք գիտեր թէ արդեօք մեր նորանոր ղեմբարագրութիւններն ալ ազգային զարթման պատճառ պիտի լինին, այլ կերևի թէ Հայաստանի սոսկը այս կոչումն ունի և պահ մը ցիրուցան հայոց բոլոր ուշադրութիւնը ի Հայաստան կը դրաւէ։ Սովոր համար եղած հանդանգամութիւններ ցոյցի մը կերպարանք առած են, ամէն հայ Պոլիս այդ նիթին վրա կը խոսի, ընկերութիւնք կուգեն մասնակցել. Դարոցական Հայաստանց աղջիկներու ընկերութիւնը իւր աղքատիկ գանձէն մաս կը հանէ, Ազգանուէր հայաստանց ընկերութիւնը պարտանգէս կը ձեռնարկէ տալ Օրթագիւղ լսարան կը դրուի, Աբարատեանը կը գրէ առ կեղր. խնամով մասնաժողովն թէ միւս բոլոր բարոյական և նիթական միջոցներն սովորեց խնամով մասնաժողովս խմասուն տարաբերութեան ներքն կը դնէ։—Իսկ կառավարութեան պաշտօնեաներն ինչ արգելք որ հնար է ի գործ դնել կը դնեն, որպէս զի մեր եղբարց օգնութեան չը հասնենք։ Հայաստանէ առ կեղր. մասնաժողովն խրկուած հեռագիրներն չեն յանձներ, ասում հոն խրկուածներ վար կը գնեն կամ կուչգնեն, և դեռ երբէկ մեր թերթերն հաղորդեցին թէ 15 օրէ կեղրանէն առ վան խրկուած հեռագիրներուն պատասխան չը գար. կառավարութիւնը կառարել թէ հեռագիրներն ուրուած են։ Սոսկ միջոցին հեռագիրներն ուրուած է ըսել գէշ միջոց չէ. Մեր ընդունած ստոյգ տեղեկութիւններն և նամակներն կը հաստատեն թէ երբ Կ. Պոլսէն Վան դրամ գնաց, ամենէն կարօտներուն հացի հետ միասին մի քանի փող բաժնեցին որպէս զի ուրիշ պէտքեր կարենան հոգալ, հապա թէ խեղճերը փողը ձեռքերնին առած էին, ահա կառավարութեան զօրքերը վրա կը հասնեն և տուրքերը բռնի պահանջելով, այդ չնչին փողերն աղքատներու ձեռքէն խլելով կառավարութեան մեղուլը կը ձգեն. Մեք չեմք զարմանար, զի գիտեմք թէ այսպէս միշտ պիտի ընեն, այլ ուելի ցաւալին հայոց ոմանց զգաստութիւնն է որ խեղճ ժողովրդի թշուառութիւնէն չան կուզեն հանել, միաբնակով թրքաց հետ. Վանայ մէջ դարձուածներն գիտեմք. Levant կարդնէն հրատարակած նամակի մը մէջ կրսի թէ տեղական ժողովի անդամներուն մէջ Արաս օղլու տաճիկ մը և Գրիգոր անուամբ հայ մը ցորեն հրապարակը ուղածնուն պէս կը գործածեն և մի քանի հազար ոսկի ուելի չահելու համար ոռ է վատ միջոցներու առաջ խոյս չեն տար. զարձեալ Levant կը գրէ թէ Կարնոյ գիւղերու մէջ, երբ գիւղացոց ձեռքը քիչ մը ստակ անցնի անմիջապէս տեղական իշխանութիւնը գինուոր կը խրկէ և տուրքերը կը պահանջէ, սակայն այս անգամ թիւրք գիւղացիները վռնտեր են այդ գինուորները։

Սովոր հետ մէկ տեղ հարստահարութիւններն ալ կը չարունակին, տեղեկագիրներն կուգան և Պարտիզակը Բ. Դրան կը հաղորդէ։ Սերաստիայէն Ասրաց գայմամէն վրա խիստ բողոքներ կուգան և Պարտիզակը հեռագրով Սերաստիոյ իշխանութեան բողոքելով, ժողովրդական արդար գանգատներն նկատողութեան առնուլ պահանջեր է։ Բաղէշի և Մուշի մէջ եղող Մուրկան և Քասպարոյեր գիւղերէն ստակի բողոքներ կուգան քիւրդ պէյերու դէմ. Քրդի գայմամամը, որոյ ամենքն պաշտպանութիւն կընէին հայերն, պաշտօնակ կը լինի, զի քիւրդ պէյերու բարեկամը չէ։

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱՅԻՑ

ԳՈՐԻ, 26 մարտի։ Աւագ քահանայ Տէր-Սահակեանց և պ. Գալուստ Սահակեանց յայտնում են նուիրատու անձանց, որ Գորու մէջ կազմած յանձնաժողովը Վանի հայ սովատանչներն օգնելու համար, մինչև այսօր ժողովել է արդէն 1051 բուլ և այսօր այդ գումարից 1000 բուլ ուղարկվեցաւ է «Մշակ» խմբագրին, ուր հարկն է հասցնելու համար։ Հանգանակութիւնը շարունակվում է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ